ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 106/10

Քաղ. Երեւան **24 մարտի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. մարտի 24-ի նիստում (արձանագրություն N78/3) քննարկեց Վրաստանի Հանրապետության «Լոմիսի» ԲԲ ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ռ. Մանասերյանի 2010թ. փետրվարի 17-ի «Յուրտավ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող «*ՆԱՏԱԽՏԱՐԻ*» (*N 11382*) բառային ապրանքային նշանի գրանցման գործողությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ բողոքը:

Բողոքում ներկայացված է, որ «ՆԱՏԱԽՏԱՐԻ» բառային ապրանքային նշանը գրանցելիս՝ փորձաքննության ընթացքում, փորձագետը հաշվի չի առել, որ Նատախտարին աշխարհագրական տերմին է՝ Վրաստանի տարածքում գտնվող տեղանուն: Այդտեղ է գտնվում «Լոմիսի» ԲԲ ընկերության ոչ ալկոհոլային ըմպելիքների և գարեջրի արտադրությունը, որը հիմնված է այդ տեղանքի աղբյուրների ջրերի վրա:

Այդ աղբյուրների ջրերի յուրօրինակ բաղադրությունը առանձնահատուկ համ են տալիս «Լոմիսի» ԲԲ ընկերության արտադրանքին: Հենց դրա հաշվին ևս «ՆԱՏԱԽՏԱՐԻ» անվանումով ոչ ալկոհոլային ըմպելիքները մեծ համբավ են ձեռք բերել սկզբում վրացական, այնուհետ հայկական սպառողի մոտ:

Այդ անվանումով լիմոնադների տեսականին հայ սպառողի մոտ զուգորդվում է վրացական երևի թե միակ որակյալ և յուրատեսակ արտադրանքի հետ: Այդ արտադրանքը իր հանրաճանաչությամբ հայկական շուկայում նույնիսկ գերազանցել է վրացական գինիների վարկանիշը՝ վերջին տարիներին շուկան դրանց անորակ կեղծիքներով ողողվելու պատճառով:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացրեց կոլեգիայի անդամ պրն.Ա. Բաբայանը: Նա նշեց, որ ներկայացված է բողոք «Լոմիսի» ԲԲ ընկերության կողմից «Յուրտավ»

ՍՊԸ-ի գրանցած «ՆԱՏԱԽՏԱՐԻ» (Վկ.N11382) բառային ապրանքային նշանը անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Միաժամանակ տեղեկացրեց, որ բողոքում նշված է, որ Նատախտարին աշխարհագրական անվանում է Վրաստանի տարածքում, եւ որ այնտեղի աղբյուրների ջրի յուրօրինակ բաղադրությունը առանձնահատուկ նրբերանգների համ են տալիս «Լոմիսի» ԲԲ ընկերության արտադրանքին:

Հիշատակեց նաեւ, որ բողոքում նշված է, որ հիշյալ ապրանքային նշանը գրանցված է «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11 հոդվածի խախտմամբ, քանի որ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն, որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել այն նշանները, որոնք հանդիսանում կամ պարունակում են՝

ա) կեղծ կամ սպառողին մոլորության մեջ գցող տեղեկություններ ապրանքի կամ արտադրողի մասին.

բ) աշխարհագրական նշում և գրանցման են ներկայացվել այնպիսի ապրանքների համար, որոնք չեն ծագել տվյալ աշխարհագրական նշման, տեղանքից, եթե այդ աշխարհագրական նշման օգտագործումը մոլորության մեջ է գցում սպառողին ապրանքների իրական ծագման վայրի հարցում:

Օրենքի նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել նաև այն նշանները, որոնք հակասում են ... անբարեխիղճ մրցակցության կանխման կանոններին (գործարար շրջանառության սովորույթներին):

17.03.2010թ. «Ցուրտավ» ՍՊ ընկերության ներկայացրած գրությանը կցված է ՀՀ Երեվան քաղաքի Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 06.11.2009թ վճիռը, որը վկայում է, որ «Ցուրտավ» ՍՊ ընկերությունը ճանաչվել է սնանկ եւ որպես սնանկության գործով կառավարիչ նշանակվել է պրն.Հ. Կոշեցյանը:

«Ցուրտավ» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ պրն.Հ. Կոշեցյանը նշեց, որ համաձայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ի մասի պարտապանի գույքի կազմում ներառվում է ցանկացած գույք և այլ ակտիվներ՝ ներառյալ մտավոր սեփականության օբյեկտ: Տվալ պարագայում վերը նշած «Նատախտարի» ապրանքային նշանը համարվում է ընկերության սեփականությունը, որը համաձայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի գույքագրվել է որպես ակտիվ և ներառվել է գույքագրման ցուցակում

հետագայում վաճառելու և բյուջեի նկատմամբ առաջացած պարտավորությունները մարելու համար:

Միաժամանակ տեղեկացրեց, որ համաձայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2 մասի «ա», «բ», «գ» եւ «ե» կետերի պարտապանին սնանկ ճանաչելու պահանջի մասին վճիռը օրինական ուժի մեջ մտնելու պահից արգելվում է պարտապանի համար գույքային պարտավորություն առաջացնող որեւէ քաղաքացիական կամ վարչական գործի վարույթի սկսումը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող, կարճվում է սնանկության վարույթին առնչվող կամ դրա ընթացքի վրա ազդող պարտապանի համար գույքային պարտավորություն առաջացնող այն քաղաքացիական գործի վարույթը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ պարտապանի մասով:

Արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, կարճվում է գույքային բռնագանձումներով բոլոր կատարողական վարույթները:

Պրն. Հ.Կոշեցյանը նշեց նաեւ, որ գույքը գնահատված չէ, իսկ գնահատված լինելու պարագայում այդ գնահատման չափով կարող են առաջացնել գույքային պարտա-վորություններ:

Բողոքարկող պրն.Ռ.Մանասերյանը նշեց, որ ուշադրություն պետք է սեւեռել այն փաստին, որ տվյալ գրանցված «ՆԱՏԱԽՏԱՐԻ» ապրանքային նշանը հայ սպառողին մոլորության մեջ է գցում, քանի որ նրա մոտ ձեւավորվում է պատկերացում, որ տվյալ արտադրանքը արտադրված է, ոչ թե Հայաստանում, այլ Վրաստանում:

Քննարկման արդյունքում բողոքարկման խորհուրդը հանգեց այն եզրակացության, որ փորձաքննության ընթացքում փորձագետը հաշվի չի առել, որ Նատախտարին Վրաստանի տարածքում գտնվող տեղանուն է, նշվածի համար հիմք են ծառայում ինտերնետային կայքում տեղադրված տեղեկատվությունը (http://travelingluck.com/Asia/Georgia/Georgia+(general)/_612743_Natakhtari.html#local_map http://www.fallingrain.com/world/GG/00/Natakhtari.html):

Վերոհիշյալից հետեւում է, որ «ՆԱՏԱԽՏԱՐԻ» ապրանքային նշանը գրանցվել է «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի «ա» եւ «բ» կետերի խախտմամբ, քանի որ սպառողների մոտ տպավորություն է ստեղծվում, որ այդ ապրանքային նշանով մակնշված արտադրանքը արտադրվել է Վրաստանի Հանրապետությունում եւ մոլորության մեջ է գցում հայ սպառողին արտադրության վայրի հարցում: Այս դեպքում գործում է Օրենքի 28-րդ հոդվածի 1 կետի «ա» ենթակետը, համաձայն որի, ապրանքային նշանը կարող է վիճարկվել եւ ճանաչվել անվավեր ամբողջովին կամ մասնակիորեն՝ իրավական պահպանության ամբողջ ժամկետի ընթացքում, եթե այն տրամադրվել է սույն օրենքի 11 հոդվածով սահմանված պահանջների խախտմամբ:

Ինչ վերաբերում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դրույթների, ապա կարծում ենք, որ այս դեպքում չեն գործում, քանի որ կատարվել է սխալ պետական գրանցում եւ տվյալ դեպքում ոչ նյութական ակտիվ հանդիսացող ապրանքային նշանի գրանցման անվավերությունը չի կարող գույքային պարտավորություններ առաջացնել «Ցուրտավ» ՍՊԸ-ի համար:

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման» կարգի 74 -րդ կետի 1-ին ենթակետով՝ բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Լոմիսի» ԲԲԸ-ի բողոքը եւ «*ՆԱՏԱԽՏԱՐԻ»* (գրանցման համար՝ *N 11382*) բառային ապրանքային նշանի գրանցումն ամբողջովին անվավեր ճանաչել:

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումն ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան:

Բողոքարկման խորհրդի

նախագահ Ա.Ազիզյան